**Համաձայնագիր-1**
**28.11.2025թ. կնքված N ՀՀ-ՊԵԿ-ՄԱԾՁԲ-26/8-Ք ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

«17» փետրվարի 2025թ.

ք. Երևան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա. Խաչատրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 28.11.2025թ. կնքված N ՀՀ-ՊԵԿ-ՄԱԾՁԲ-26/8-Ք ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2. Պայմանագրի 4.2 կետի «Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը» բառերով:

1.3. Պայմանագրի այլ պայմաններում «Ծառայության մատուցման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «Ծառայության մատուցման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը» բառերով:

1.4. Հավելված N 1-ում «Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) 72261160/516» բառերը փոխարինել «Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) 72261160/517» բառերով:

1.5. Կնքվելիք պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2026թ. հունվարի 3-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը և կից հավելվածը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

**Է.Գևորգյան** ______________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ 00807555
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930030005130100

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Տնօրեն

**Ա. Խաչատրյան** ______________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1
Հաստատված է
«28» նոյեմբերի 2025թ. կնքված
N ՀՀ-ՊԵԿ-ՄԱԾՁԲ-26/8-Ք գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի սպասարկման ծառայություն | 4232 | | 1085917 | 1085917 | 2714467 | 2714467 | 2714467 | 4343017 | 4343017 | 4343017 | 6514200 | 6514200 | 6514200 | 6514200 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար

**Է.Գևորգյան** ______________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ 00807555
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930030005130100
«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Տնօրեն

**Ա. Խաչատրյան** ______________________
/ստորագրություն/
Կ.Տ.